ՍՈՎԵՏԱՀԱՅ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՕՋԱԽՆԵՐԸ

Վ. Հ. ՂԱԶԱՆՋՅԱՆ

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո հիմնավորապես փոխվեցին հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և կուլտուրական գոյապայմանները։ Բազմադարյան հայ կուլտուրան իր բոլոր օղակներով մտավ որակապես մի նոր դարաշրջան։ Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին Հայաստանի Կոմունիստական պարտիան և կառավարությունը հսկայական աշխատանք կատարեցին կուլտուրական շինարարության ասպարեզում։ Ինչպես սոցիալիստական շինարարության բոլոր օղակներում, այնպես էլ նոր կուլտուրայի ստեղծման, ամրապնդման ու հետագա զարգացման գործում անգնահատելի դեր է խաղում Սովետական Ռուսաստանում ծավալված տնտեսական ու կուլտուրական շինարարության հարուստ փորձը։

Նոր կուլտուրայի հիմքերը դնելու նպատակով ձեռնարկվեցին մի շարք արմատական միջոցառումներ՝ կուլտուրական արժեքների ազգայնացում, դպրոցի անջատում եկեղեցուց, անգրագիտության վերացման վերաբերյալ դեկրետի ընդունում, ժողովրդական կրթության սիստեմի կազմակերպում, աշխատավորների, առաջին հերթին բանվորների երեխաների համար կրթություն ստանալու համապատասխան պայմանների ստեղծում, բարձրագույն կրթության սկզբնավորում և այլն։ Վերականգնվեցին ու հիմնվեցին կուլտուրայի բազմաթիվ նոր օջախներ։ Ստեղծվեցին և հաջողությամբ գործում էին առաջին ուսումնագիտական հաստատությունները՝ Երևանի Պետական համալսարանը, Պետական կոնսերվատորիան, Մանկավարժական ինստիտուտը, Գիտության և արվեստի ինստիտուտը, բազմաթիվ հանրակրթական դպրոցներ, բանֆակներ (Երևանում և Լենինականում), սովետական-պարտիական դպրոցներ (Երևանում, Լենինականում, Ղարաբիլիսայում), Գեղարվեստական-արդյունաբերական տեխնիկումը, Պետական կենտրոնական գեղարվեստական դպրոցը, արտադպրոցական կանաչան հիմնարկներ և այլ տիպի ուսումնական հաստատություններ։

Այդ տարիներին են սկսում ձևավորվել սովետահայ գրականությունը և արվեստը իրենց կազմակերպություններով, ընկերություններով, միավորումներով, խմբակներով և օբյեկտներով. Երևանի «Հայ գեղարվեստական աշխատողների միությունը», «Մուրճը», «Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան», «Պետլուսկիոնը», «Հայ կերպարվեստագետների ընկերությունը» և այլն։ Թատերական-երաժշտական կուլտուրայի բնագավառի օջախներից հիմնադրվում են՝ Պետական թատրոնը, երաժշտական ստուդիան, Ամո Խարազյանի «Ազատ կոլեկտիվ» թատերախումբը, «Նոյեմբերի 29-ի թատրոնը» Վաղարշապատում, ռեսպուբլիկայի զանազան վայրերում կազմակերպված թատերական ինքնագործունեության տասնյակ խմբակներ, Լենինականի պարարվեստի և երաժշտական ստուդիաները, «Հայկական օպերայի բարեկամների ընկերությունը» և այլն։ Բացվում են պետական, ռեսուրսային, մանկավարժական, գավառական, գյուղատնտեսական, բնապատմական, նկարիչների և այլ թանգարաններ։ Հիմնադրվում են Հանրային գրադարանը, Մատենադարանը, Հնությունների պահպանության կոմիտեն, Գեղարվեստի աշխատավորների միությունը, Լուսաշխի տունը և սովետահայ կուլտուրայի այլ օջախներ։

Մի հոդվածի սահմաններում հնարավոր չէ սպառել սովետահայ կուլտուրայի այդ շրջանի հարուստ պատմությունը։ Մենք համառոտակի կխոսենք 1920—1925 թթ. Սովետական Հայաստանում կուլտուրայի մի քանի անդրանիկ օջախների ստեղծման մասին։

* * *

1920 թ. դեկտեմբերին կազմակերպվում է Երևանի Պետական համալսարանը։ Հաստատվում են համալսարանի անձնակազմը և հաստիքները՝ 20 պրոֆեսոր, 30 դասատու, լեզուների 7 դասախոս, 1 գրադարանապետ, 10 տեխնիկական և գրասենյակային պաշտոնյա։ Համալսարանի ռեկտոր է ընտրվում խոշորագույն պատմաբան և հայագետ Հ. Մանանդյանը։ Ժամանակավոր

կանոնադրության համաձայն համալսարանի գլխավոր օրգան էր համարվում խորհուրդը, որի մեջ մտնում էին ֆակուլտետների դեկանները, 3 ներկայացուցիչ դասախոսական կազմից և մեկական ներկայացուցիչ՝ պարտիայից, Լուսժողկոմատից, պրոֆմիությունից և մյուս հասարակական կազմակերպություններից։

Նորաստեղծ համալսարանի առջև կանգնած խնդիրներից ամենակարևորը նոր, սովետական մասնագետներ պատրաստելն էր։ Ուսուցիչների, գյուղատնտեսների, բժիշկների, տեխնիկների և մյուս մասնագետների կադրեր պատրաստելու վիթխարի գործի պատկառելի մասն իր վրա էր վերցնում սովետահայ կուլտուրայի այդ նորաստեղծ օջախը։ Ծրագրվում էր համալսարանում պարապմունքները տանել լաբորատորական և սեմինարական մեթոդներով և ըստ կարելվույն քիչ ժամեր հատկացնել դասախոսություններին։

Համալսարանում գրադարան կազմակերպելու նպատակով նրան են հանձնվում մի շարք հիմնարկություններում եղած գրադարանները (Արտաքին գործերի և նախկին պառլամենտի հանրային կրթության կոմիսարիատների, Ցեմական դպրոցի, Էջմիածնի ճեմարանի և այլն)։ 1924 թ. սկզբին համալսարանի գրադարանն արդեն ուներ 34000, իսկ 1925—26 թթ.՝ 50 հազար կտոր գիրք։

Հատկապես 1922—23 ուսումնական տարվանից համալսարանի վարչությունը, Հայաստանի Կոմպարտիայի և կառավարության օգնությամբ, Լուսժողկոմատի անմիջական ղեկավարությամբ, սկսում է կազմակերպել քիմիայի, ֆիզիկայի, մեխանիկայի, լեռնային գործի և այլ լաբորատորիաներ։

ՀԿ(բ)Պ կենտկոմը 1922 թ. հոկտեմբերի 10-ին որոշում է ուսանողական ու պրոֆեսորադասախոսական կազմն ուժեղացնել կոմունիստներով և կարգավորել թոշակների հարցը։ ՀՍՍՌ Ժողկոմխորհը 1923 թ. օգոստոսի վերջերին 25000 ռուբլի է տրամադրում համալսարանի կարիքների և լաբորատորիաների համար[1]։

Հետզհետե բարելավվում է նաև ուսանողության սոցիալական կազմը։ Եթե առաջին ուսումնական տարում 225 ուսանողների մեջ բանվորներ և գյուղացիներ չկային, ապա արդեն 1922—1923 թթ. ուսանողների ընդհանուր թվից 221 հոգի բանվորական և գյուղացիական ծագում ունեին։ ՀԿ(բ)Պ կենտկոմը 1924 թ. հունվարի 8-ի որոշմամբ հաստատում է համալսարան ընդունվողների պլանը՝ 200 հոգի, և պարտավորեցնում Լուսժողկոմատին ու ռեկտորատին առաջին հերթին ընդունել աշխատավոր երիտասարդություն։

1923 թ. հոկտեմբերի 20-ին ՀՍՍՌ Ժողկոմխորհի որոշմամբ Երևանի ժողովրդական համալսարանը վերակոչվում է Հայկական ՍՍՌ Պետական համալսարան, որից հետո ավելի ճշտվեցին նրա խնդիրները, պատրաստվող կադրերի պրոֆիլը և կոնտինգենտի սոցիալական կազմը։

Ռեսպուբլիկայի գիտական մտքի հիմնական կենտրոնը համալսարանն էր, որտեղ նշանակալից աշխատանքներ էին տարվում հայագիտության, դասագրքերի, բառարանների, գիտական ձեռնարկների ստեղծման ուղղությամբ, ֆիզիկայի, մաթեմատիկայի և գիտության մյուս բնագավառներում։ Հրապարակվում են Վ. Արծրունու «Հայ-ռուս-լատիներեն բժշկական բառարան», Մ. Արեղյանի «Ռազմական տերմինների բառարան», Հ. Աճառյանի «Արմատական բառարան» և այլ աշխատություններ։ Ստեղծվում են Հ. Նավակատիկյանի «Բարձրագույն հանրահաշիվ» և «Անալիտիկ երկրաչափություն», Ա. Հակոբյանի «Ֆիզիկա» և «Թեորիական մեխանիկա» ձեռնարկները և այլ գործեր։ Համալսարանի շատ դասախոսների գիտական աշխատությունները կարևոր պրակտիկ նշանակություն ունեին ռեսպուբլիկայի վերականգնվող ժողովրդական տնտեսության համար։

Համալսարանում իրենց գիտական և մանկավարժական աշխատանքներն են սկսում անվանի գիտնականներ՝ Հ. Մանանդյանը, Մ. Արեղյանը, Հ. Աճառյանը, Ա. Տերտերյանը, Գր. Զափանցյանը, Թ. Թորամանյանը, Աշ. Հովհաննիսյանը, Հ. Ադատյանը, Աշխարբեկ-Քալանթարը, Հ. Գյուլիքևխյանը, Լևոն (Առաքել Բարախանյան), Պ. Քալանթարյանը, Հ. Ջերոտարյանը (Անժուր), Տ. Մուշեղյանը, Ա. Շավարշյանը, Բ. Ավդալբեգյանը, Հ. Նավակատիկյանը, Գ. Գրձելյանը, Վ. Արծրունին, Ա. Հակոբյանը, Գ. Էդիլյանը, Գ. Արեշյանը, Վ. Ռշտունին և ուրիշներ։

Համալսարանում գործում էին լենինիզմի խմբակներ, սիստեմատիկ աշխատանք էր ծավալել «Կորչի՛ անգրագիտություն» կամավոր ընկերությունը, որը համաքաղաքային մասշտաբի աշխատանքներ էր կատարում և խնդիր էր դրել գործել ռեսպուբլիկական մասշտաբով։ Կային նաև գրական, ագրոբիոլոգիական, քիմիական և այլ խմբակներ։ Պարտիական և կոմերիտական բջիջները շեֆական աշխատանք էին տանում գյուղերում։ Համալսարանի կոլեկտիվից գյուղերն

---

1 «Խորհրդային Հայաստան», 1923, № 190։

էին ուղարկվել 20-ից ավելի մարդ, որոնք զանազան զրույցներ էին անցկացնում բժշկության, գյուղատնտեսության, միջազգային դրության, սովետական շինարարության և այլ հարցերի շուրջը։

1925 թ. համալսարանը տալիս է իր առաջին շրջանավարտները։ Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին Երևանի համալսարանում սովորում էին ՍՍՌՄ եղբայրական ռեսպուբլիկաների և արտասահմանյան մի շարք երկրների ուսանողներ։ 1925—1926 ուսումնական տարում սովորում էին 287 հոգի Վրաստանից, 51՝ Ադրբեջանից, 8՝ Թուրքիայից, 5՝ Հունաստանից, 3՝ Պարսկաստանից և այլն։

Սովետական Ռուսաստանը մեծ օգնություն է ցույց տալիս Հայաստանին՝ ազգային ինտելիգենցիայի կադրեր պատրաստելու գործում։ Այսպես՝ 1923—1924 ուսումնական տարում Երևանի համալսարանի մի շարք գիտական աշխատողներ գործուղվում են Մոսկվա և Լենինգրադ իրենց որակավորումը բարձրացնելու համար։ Միութենական կառավարությունը այդ նպատակների համար նշանակալի միջոցներ է հատկացնում։ ՌՍՖՍՌ-ի Աշխատանքի և Պաշտպանության խորհուրդը 1924 թ. փետրվարի 11-ի որոշմամբ Սովետական Հայաստանի Լուսժողկոմատին մեծ գումար է բաց թողնում ուսումնական պիտույքներ ձեռք բերելու համար։ Հայաստանի շատ երիտասարդներ ուղարկվում են ՌՍՖՍՌ-ի և Ուկրաինայի բուհերը, տեխնիկումները՝ սովորելու և ձեռք բերելու այն մասնագիտությունները, որոնք տեղում ստանալ հնարավոր չէր։ 1924 թ. այցելելով Հայաստան և ծանոթանալով Երևանի համալսարանին, Ա. Վ. Լունաչարսկին հանդում է այն եզրակացության, որ հարկավոր է ամեն կերպ օգնել, որպեսզի բարձրագույն կրթության այդ ջահը, որը պետք է դառնա կուլտուրական ձգողական կենտրոն հայերեն լեզվով բոլոր սովետների համար, չմարի, աչք բոցավառվի[2]։

Անդրանիկ բարձրագույն դպրոցի հիմնադրումը հնարավորություն ստեղծեց, որպեսզի հայ մտավորականությունը կարողանա աշխատել իր ժողովրդի կուլտուրական շինարարության ասպարեզում, իսկ երիտասարդությունը կարողացավ մայրենի լեզվով բարձրագույն կրթություն ստանալ։

Հայկական ՍՍՌ Լուսժողկոմատի 1921 թ. հունվարի 6-ի հրամանով Հայաստանի սահմաններում գտնվող գեղարվեստական և հնագիտական հուշարձաններն ու իրերը պահպանելու, ուսումնասիրելու և ժողովրդական լայն մասսաների կրթական պահանջներին ծառայեցնելու համար Լուսժողկոմատին կից հիմնվում է Հնությունների և գեղարվեստի հուշարձանների պահպանման հանձնաժողով[3]։ Հանձնաժողովը և ժողովրդական լուսավորության գավառական բաժինները կատարելու էին գեղարվեստական և հնագիտական արժեք ունեցող բոլոր հուշարձանների և առարկաների ինչպես ամբողջական հավաքածուների, այնպես էլ առանձին նմուշների ցուցակագրում։ Հաշվի էին առնվելու ընկերությունների, հիմնարկությունների և մասնավոր անձանց մոտ գտնվող բոլոր հնագիտական և գեղարվեստական արժեքավոր հավաքածուները և առանձին առարկաները։

Հաշվառված գեղարվեստական և հնագիտական հուշարձանները և առանձին առարկաները չէին կարող մի սեփականությունից անցնել մյուսին, տեղափոխվել ու վերանորոգվել կամ ուղղվել ու կերպարանափոխվել՝ առանց Հնությունների և գեղարվեստի հուշարձանների պահպանման հանձնաժողովի կամ ժողովրդական լուսավորության գավառային բաժինների գիտության։

Հուշարձանների հավաքածուները և առանձին առարկաները կարող էին գրավվել կամ տրվել վերոհիշյալ հիմնարկությունների իրավասության ներքո, եթե նրանց պահպանմանը վտանգ սպառնար տերերի անփույթ վերաբերմունքի պատճառով կամ եթե տերերը հնարավորություն չունենային ձեռք առնելու պահպանման կտրուկ միջոցներ։ Բոլոր հիմնարկները հնագիտական և գեղարվեստական հուշարձաններ և առանձին առարկաներ բռնագրավելու դեպքում նախօրոք պետք է հայտնեին և ստանային համապատասխան թույլտվություն Երևանում՝ Հնությունների և գեղարվեստի հուշարձանների պահպանման հանձնաժողովից, իսկ գավառներում՝ ժողովրդական լուսավորության տեղական բաժիններից։

---

2 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Կենտրոնական պարտիական արխիվ (Մոսկվա), ֆ. 142, ց. 1, գ. 44, թ. 17—20։

3 Համալսարանի այդ տարիների պատմության մասին ավելի մանրամասն տե՛ս Հ. Հովհաննիսյան, ՀՍԽՀ Պետական համալսարան, Երևան, 1926 և Լ. Ղարիբջանյան, Էջեր Երևանի Պետական համալսարանի պատմությունից (1921—1930 թթ.), «Տեղեկագիր», հաս. գիտ., № 1, 1960։

4 «Կոմունիստ» 1921, № 27։

Գեղարվեստական և հնագիտական հուշարձանների հավաքածուների և առանձին առարկաների տերերը (մասնավոր անձինք, միությունները և հիմնարկությունները) պարտավոր էին Լուսժողկոմատի հրամանը հայտարարելու օրից մի ամսից ոչ ուշ ժամանակամիջոցում ներկայացնել ընդհանուր տեղեկություններ և ցուցակներ իրենց մոտ գտնված գեղարվեստական և հնագիտական հուշարձանների հավաքածուների և առանձին առարկաների մասին։ Որոշումը չկատարողները ենթարկվում էին խիստ պատասխանատվության։ Հրամանը չէր տարածվում այն գեղարվեստական գործերի վրա, որոնք գտնվում էին դրանց հեղինակների մոտ։

Այդ գործն ավելի առաջ տանելու նպատակով Հայկական ՍՍՌ Ժողկոմխորհի 1923 թ. դեկտեմբերի 18-ի դեկրետով կազմվում է Հայաստանի հնությունների պահպանության կոմիտե։ Կոմիտեն իր գործունեությունն սկսում է ծավալել հաջորդ տարվա ապրիլից։ Լուսժողկոմի 1923 թ. դեկտեմբերի 30-ի հրամանով Կոմիտեի նախագահ է նշանակվում հռչակավոր ճարտարապետ Ալ. Թամանյանը[5], անդամներ՝ Թ. Թորամանյանը, Սեն. Տեր-Հակոբյանը, Աշխարբեկ Լոռու Մելիք-Քալանթարը (գիտական քարտուղար), Մ. Սաոյանը։

Քանի որ կոմիտեին էր վերապահված ռեսպուբլիկայում սփռված նյութական կուլտուրայի բազմահազար մնացորդների իրական և տեխնիկական պահպանության և նրանց սիստեմատիկ ուսումնասիրության գործը, ուստի նա առաջին հերթին անց է կացնում ռեսպուբլիկայի սահմաններում գտնվող բոլոր հնությունների ցուցակագրությունը։ Կոմիտեն գործում էր նախօրոք մշակված պլանով, աշխատելով մի կողմից՝ բավարար հիմքերի վրա դնել հուշարձանների իրական պահպանությունը (հատուկ պահակներով) և միաժամանակ ապահովել, նրանց տեխնիկական վերահսկողությունը՝ վերակառուցումներով, մյուս կողմից՝ կազմակերպել այդ հուշարձանների սիստեմատիկ ուսումնասիրության գործը։

Կոմիտեն կազմակերպում է գիտական արշավախմբեր դեպի Էջմիածին, Արագած, Ապարան, Լենինական, Լոռի-Փամբակ և Դիլիջան։ Հնությունների պահպանության կոմիտեն մասսայականացնում էր Ժողկոմխորհի դեկրետը և Կոմիտեի կանոնադրությունը, ինչպես նաև տեղերում պրոպագանդա էր մղում իր անդամների միջոցով՝ էքսկուրսիաների և ամեն տեսակի այցելությունների ժամանակ։ Բացի այդ, Կոմիտեն ստեղծել էր գավառական ներկայացուցիչների մի ամբողջ ցանց՝ մասնակից անելով այդ գործին լուսավորության և ընդհանրապես կուլտուրայի ասպարեզում աշխատողներին և բոլոր նրանց, ովքեր ամենայն ուշադրությամբ հսկում էին իրենց շրջաններում եղած հնությունների պահպանության վրա և կենդանի կապ պահպանում Կոմիտեի հետ։ Կոմիտեն ուներ նաև թղթակից-աշխատակիցներ, շրջաններին լավ իրազեկ մարդիկ, որոնք պարբերաբար հայտնում էին իրենց ունեցած կամ հավաքած տեղեկությունները հնությունների, նրանց տեղի, վիճակի մասին և գրի էին առնում այն ավանդությունները, որ պահել էր ժողովուրդը հուշարձանների վերաբերյալ։

Հայկական ՍՍՌ Ժողկոմխորհի 1921 թ. մայիսի 11-ի որոշմամբ հիմնադրվում է Հայաստանի Պետական հանրային գրադարանը։ Գրադարանի բացումը տեղի ունեցավ 1922 թ. նոյեմբերի 7-ին՝ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 5-րդ տարեդարձի օրը։

Բացման պահին գրադարանում կար 18000 կտոր գրականություն, 80 տեղանոց երեք ընթերցասրահ և ընդամենը 7 աշխատակից։

Գրադարանի գրքային ֆոնդը կազմվում է տարբեր հիմնարկների մեծ ու փոքր գրադարաններից և անհատների հատկացումներից ու նվիրատվություններից։ Դրանց մեջ նշանավոր են Մոսկվայի նախկին Լազարյան Ճեմարանի գրադարանը (30000 հատոր), Խ. Աբովյանի անվան դպրոցի գրադարանը (18000 հ.), Արդուբյան-Երկայնաբազուկի (8000 հ.), Ալ. Մյասնիկյանի (7000 միավոր), Վ. Ղորդանյանի (6000 հ.) և այլոց անձնական գրադարանները։ Հանրային գրադարանին են հանձնվում նաև Թիֆլիսի նախկին Ներսիսյան դպրոցի, «Կովկասի հայոց բարեգործական ընկերության», «Մշակի» խմբագրության, Թիֆլիսի ժողովարանի, «Կովկասի հայոց հրատարակչական ընկերության» գրադարանների մնացորդները և այլն։

---

5 Տասը տարուց ավելի, մինչև իր կյանքի վերջը, գտնվելով կոմիտեի նախագահի պաշտոնում, Ալ. Թամանյանը խոշոր աշխատանք տարավ հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգությունն ուսումնասիրելու, հուշարձանները ավերումից փրկելու և դրանք վերականգնելու ուղղությամբ։ Նրա նախաձեռնությամբ հաճախ կոմիտեում լսվում էին բովանդակալից զեկուցումներ (Ալ. Թամանյանի մասին հետաքրքրական տեղեկություններ կան Լ. Զորյանի կազմած «Ալեքսանդր Թամանյան» գրքում, որտեղ մեծատաղանդ ճարտարապետի ժամանակակիցներ Ալ. Շչուսևը, Ստ. Զորյանը, Գր. Շիրմազանը, Մ. Գրիգորյանը, Հ. Խալփախչյանը իրենց հուշերում անդրադառնում են նաև Թամանյանի բեղմնավոր գործունեության այդ բնագավառին)։

Գրադարանը մի կողմից հավաքում և պահպանում էր գոյություն ունեցող գրականությունը, իսկ մյուս կողմից՝ սպասարկում ընթերցողներին։ Աշխատանքը տարվում էր 3 ուղղությամբ՝ կազմակերպական, տեխնիկական և գրադարանային։ Սակայն շենքի հարմարությունները չէին բավարարում, ընթերցասրահները կարողանում էին սպասարկել քիչ թվով մարդկանց։ Պահարանների բացակայության պատճառով տասնյակ հազարավոր թանկարժեք գրքեր և կարևոր հրատարակություններ մնում էին հատակի վրա։

Գրադարանի շենքում կարող էր տեղավորվել եղած գրքերի միայն կեսը, մնացած կեսի համար անհրաժեշտ էր ավելացնել սենյակների թիվը։ Գրքերի քանակը մոտ 45 հազար էր, որից՝ 12000 հատոր արդեն բաժանված էին բաժանմունքներին, յուցակագրված ու գույքագրված։ Հաճախորդների ընդհանուր թիվը հասնում էր 110-ի։

Հանրային գրադարանն իր ստեղծման առաջին իսկ օրերից դտնվում էր պարտիական և պետական մարմինների ուշադրության կենտրոնում։ 1923 թ. օգոստոսի 1-ին ՀԿՊ Կենտկոմի նախագահությունը լսելով Հայկական ՍՍՌ լուսժողկոմ Ա. Մռավյանի հաղորդումը, որոշում է. Անդրերկոմի միջոցով հարց հարուցել ՌԿՊ Կենտկոմի առջև Հայաստանի Պետական հանրային գրադարան Միութենական կենտրոնական գրապալատի արոնենտի մեջ ընդունելու վերաբերյալ։ Միջնորդությունը ուղարկվում է ՌԿՊ Կենտկոմ, պատճենները՝ Անդրերկոմ, Միութենական ԿԳԿ՝ Ենուքիձեին, ՌՍՖՍՌ լուսժողկոմ Ա. Վ. Լունաչարսկուն, Մոսկվայում Հայկական ՍՍՌ լիազորներկայացուցիչ՝ Ս. Տեր-Գարրիելյանին, Ռուսական կենտրոնական գրապալատ։ Այդ փաստաթղթում նշվում էր, որ Հանրային գրադարանը, հանդիսանալով Հայաստանում ամենամեծ գրապահոցը, բացի ռեսպուբլիկայում տարվող կուլտուրական ծավալուն աշխատանքից, միաժամանակ սպասարկում է Երևանի համալսարանը, Բանֆակը, Մանկավարժական ինստիտուտը, Հրամանատարական կուրսերը, Մանկավարժական թանգարանը և Պարտիական դպրոցը։

ՀԿՊ Կենտկոմը խնդրում էր Սովետական Հայաստանի հանրային գրադարանին ուղարկել ՌՍՖՍՌ-ի տերիտորիայում լույս տեսած և լույս տեսնող տպագրական հրատարակություններից մեկական օրինակ[6]։

Ի պատասխան այդ գրության, Ռուսական կենտրոնական գրապալատի վարիչի տեղակալ Ա. Բորովսկին ՌՍՖՍՌ Լուսժողկոմատի կոլեգիայի քարտուղարությանը ուղղված 1923 թ. նոյեմբերի 10-ի գրությամբ հայտնում է, որ գրապալատը բանակցություններ է վարել Գլավլիտի և Պետական հրատարակչության հետ՝ Երևանի հանրային գրադարանի խնդրանքը բավարարելու ուղղությամբ։ Գլավլիտը և Պետհրատը համաձայնվել են գրադարանին հատկացնել մեկական օրինակ հրատարակվող գրքերից, ինչպես նաև արդեն լույս տեսած գիտական, ուսումնական, սոցիալ-տնտեսական բնույթի գրականություն[7]։

Այսպիսով, 1924 թ. Հանրային գրադարանը սկսում է Մոսկվայից ստանալ ՌՍՖՍՌ-ում լույս տեսած գրքերից պարտադիր օրինակներ. դրա շնորհիվ գրադարանի գրական ֆոնդը պարբերաբար աճում է։ Միայն 1925 թ. ընթացքում Հանրային գրադարանը Ռուսաստանի, Բելոռուսիայի, Ադրբեջանի և Վրաստանի գրապալատներից ստանում է մոտ 10000 կտոր գիրք։ Հայաստանի հրատարակչություններից գրադարանը ստանում էր երեքական պարտադիր օրինակ։ Նույն թվականին նորաստեղծ գրադարանն արդեն ուներ 200000 գիրք, հանդես-թերթ և այլ տիպի գրականություն[8]։

Հանրային գրադարանը օգնություն էր կազմակերպում նաև զանազան հաստատությունների՝ ուսումնարանների, խրճիթ-ընթերցարանների, քաղաքային գրադարանների։

1925 թ. մարտին, Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ականավոր գործիչ Ալ. Մյասնիկյանի ողբերգական մահվանից հետո, Հայկական ՍՍՌ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի միացյալ սգո նիստը որոշում է Պետական հանրային գրադարանը կոչել Ալ. Ֆ. Մյասնիկյանի անունով։

Հանրային գրադարանը հսկայական դեր էր խաղում Սովետական Հայաստանի կուլտուրական կյանքում, հանդիսանալով հայ գրքի հավաքման համաշխարհային կարևորագույն կենտրոններից մեկը. հետագայում նա լայն ճանաչում գտավ թե՛ մեր Հայրենիքում, և թե՛ նրա սահմաններից դուրս։

---

6 Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական արխիվ (Մոսկվա), ֆ. 3316, ց. 16, գ. 1000, թ. 1—2։

7 Նույն տեղում, ֆ. 2306, ց. 1, գ. 1953, թ. 15։

8 «Խորհրդային Հայաստան 1920—1925 թթ.», ժողովածու, Երևան, 1926, էջ 314։

Հայաստանում սովետական իշխանության հաստատման պահին, ինչպես ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառները, այնպես էլ հրատարակչական գործը ծայր աստիճան քայքայված վիճակի մեջ էր։ Դաշնակցությունից ժառանգություն էր մնացել ընդամենը մի երկու մեքենա և աննշան քանակությամբ հնամաշ տառեր, տպարաններում աշխատում էին ընդամենը մի երկու տասնյակ բանվոր։ Հայկական ՍՍՌ Ժողկոմխորհի և Լուսժողկոմատի 1921 թ. հունիսի 6-ի դեկրետով Լուսժողկոմատին կից կազմակերպվում է Պետական հրատարակչություն, որի մեջ ձուլվում են բոլոր ժողովրդական կոմիսարիատների և մասնավոր անձանց հրատարակչական ձեռնարկությունները։ Ռեսպուբլիկայի ժողովրդական կոմիսարների և սովետական հաստատությունների հրատարակչական ձեռնարկությունները, եթե կապ ունեին հասարակական-քաղաքական կամ կուլտուրական խնդիրների հետ՝ ենթարկվում էին Պետական հրատարակչությանը։ Բոլոր գրական, գիտական և այլ ընկերությունների հրատարակչական գործունեությունը ևս ենթարկվում էր Պետական հրատարակչության ընդհանուր վերահսկողությանը և ղեկավարությանը։

1923 թ. Պետհրատը ղեկավարում էր կենտրոնական խմբագրական կոլեգիան, որի նախագահն ու անդամները նշանակվում էին Ժողկոմսովետի կողմից՝ լուսժողկոմի առաջարկով։ Կենտրոնական խմբագրական կոլեգիայի նախագահը հրատարակչության գործերի մասին պարբերաբար զեկուցում էր Լուսժողկոմատի կոլեգիային։ Կենտրոնական խմբագրական կոլեգիան մշակում և հաստատում էր բոլոր հրատարակչական ծրագիրները, իր պատասխանատվությամբ կազմակերպում տեխնիկական ապարատը, ստեղծում տպագրված գրքերը բաշխելու համար կենտրոնական դրաբաշխական բաժին (Центропечать)։ Պետհրատին կից, որպես նրա ինֆորմացիոն բաժին, գործում էր հեռագրական գործակալությունը (Арменроста), որը ենթարկվում էր խմբագրական կոլեգիայի ընդհանուր ղեկավարությանն ու վերահսկողությանը։

Խմբագրական կոլեգիան հրավիրում էր պարբերական խորհրդակցություններ, որոնց մասնակցում էին խմբագրական, հրատարակչական, բաշխման և ինֆորմացիոն բաժինների, ժողովրդական կոմիսարիատների և այն բոլոր հաստատությունների ներկայացուցիչները, որոնք կապ ունեին հրատարակչական գործի հետ։

Պետհրատի կենտրոնական հրատարակչական բաժինը իրագործում էր խմբագրական կոլեգիայի առաջադրած բոլոր տեխնիկական-հրատարակչական աշխատանքները, հետևելով դրանց նպատակահարմար բաշխմանը տպարանների միջև և հանձնարարությունների կատարմանը։

Այսպիսով, կյանքի կոչվեց մի մարմին, որը հայ իրականության մեջ առաջին անգամ էր դառնում պետական ձեռնարկություն։ Մինչև սովետականացումը Հայաստանում եղել են պատահական և շատ սահմանափակ քանակով հրատարակություններ։ Դաշնակցության տիրապետության անփառունակ շրջանում, երկու և կես տարվա ընթացքում Հայաստանում լույս էր տեսել ընդամենը 4—5 գրքույկ[10], իսկ Սովետական իշխանության առաջին երկու տարում արդեն հրատարակվել էր 98 գիրք-բրոշյուր։ Ըստ որում, կարևոր է նշել, որ Պետհրատի հրատարակած գրականությունը նվիրված էր երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման, հարևան ազգությունների աշխատավոր մասսաների եղբայրական կապերի, բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքի ամրապնդման և այլ կենսական հարցերի։

Պետհրատի ասպարեզ գալով հրապարակից վերանում էին հասարակական և մասնավոր հրատարակչական ընկերությունները, որոնք անկարող էին երկար կյանք ունենալ, նախ՝ գրքերի անբավարար տարածման, ապա՝ նյութական միջոցների սղության պատճառով։ Նոր կյանքի կոչված սովետական այդ օրգանը պետք է սահմանված ծրագրով աշխատավոր մասսաներին, երիտասարդ սերնդին դաստիարակեր մարքս-լենինյան առողջ ոգով, հրատարակեր նրանց քաղաքական, գիտական, գեղարվեստական նոր պահանջները բավարարող գրականություն։

Պետհրատի գոյության երկրորդ տարում արդեն զգացվում էր գոյություն ունեցող տպարանները լայնացնելու, ավելի կատարելագործված մեքենաներով վերասարքավորելու անհրաժեշտությունը։ Հայաստանի Կոմունիստական պարտիայի և կառավարության ձեռք առած միջոցառումների շնորհիվ 1925 թ. Պետհրատի տպարանների թիվը հասնում է 4-ի, որոնցում գործում է 12 մեքենա, այդ թվում «Ռեկորդ» տիպի 3 մեքենա, որ ստացվել էր Գերմանիայից[11]։

Հետևաբար Հայաստանի տարբեր վայրերում Պետհրատը բացում է գրախանութներ, ծրագրվում է գրախանութներ բացել նաև Սովետական Հայաստանից դուրս բնակած հայաշատ վայ-

---

9 «Նոր ուղի», ամսագիր, 1930, № 8—9, էջ 76—80։

10 «Խորհրդային Հայաստան 1920—1925 թթ.», էջ 320։

11 Նույն տեղում, էջ 321։

բերում, ուր հայերեն գրականության կարիք էր զգացվում։ 1923 թ. երկրորդ կեսից Պետհրատը հատուկ ուշադրություն է դարձնում դասագրքերի հրատարակման վրա։ Լույս են տեսնում մայրենի լեզվի դասագրքեր բոլոր հասակների համար, հրատարակվում են նաև բնագիտության, երաժշտության և այլ առարկաների դասագրքեր։ Պետհրատը կարճ ժամանակամիջոցում կարողանում է վերացնել դասագրքերի պակասը։

1924 թ. հոկտեմբերին կայացած ռեսպուբլիկաների լուսժողկոմների խորհրդակցությունը իրավունք է տալիս Սովետական Հայաստանի Լուսժողկոմատին մոնոպոլ կերպով հայերեն դասագրքեր հրատարակելու Սովետական Միության հայ բնակչության համար։ Այսպիսով, Պետհրատը սկսում է ուսումնական ձեռնարկներով բավարարել ոչ միայն Հայաստանի, այլև Վրաստանի, Ադրբեջանի հայկական դպրոցների կարիքները[12]։ Ծրագրվում է նաև դասագրքեր մատակարարել Հյուսիսային Կովկասի և Սովետական Միության այլ վայրերի հայ բնակչությանը։

Պետհրատը մեծ ուշադրություն էր դարձնում քաղաքական գրականության հրատարակությանը, որի մեջ հատուկ տեղ էր գրավում լենինյան սերիան։ 1922 թ. լույս է տեսնում Վ. Ի. Լենինի «Պարենհարկի մասին», 1924 թ.՝ «Երիտասարդության մասին» ճառերի և հոդվածների ժողովածուն, «Պետություն և ռևոլյուցիա» գիրքը։ Այնուհետև հրատարակվում են Վ. Ի. Լենինի «Ռենեգատ Կաուցկին», «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա», «Ազգային հարցը», «1905 թիվը» և «1905 թվի ռևոլյուցիան», «Պրոլետարական պայքարի նպատակը մեր ռևոլյուցիայում», «Սոցիալիստական ռևոլյուցիան և լուսավորությունը», «Կոմունիստական ինտերնացիոնալը», «Հոկտեմբերյան ռևոլյուցիան», «Նոր տնտեսական քաղաքականությունը», «Չինաստանի մասին», «Զախության մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» աշխատությունները։ 1921—1925 թթ. հրատարակվել են նաև Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ», Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական պարտիայի Մանիֆեստը», Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի երկերի երկհատորյակը[13]։

Նորաստեղծ պետական հրատարակչությունն սկսում է տպագրել նաև գեղարվեստական գրականություն։ 1921—1926 թթ. տպագրվում են Վ. Տերյանի Երկերի լիակատար ժողովածուն՝ չորս հատորով, Ստ. Զորյանի «Պատերազմը», Նար-Դոսի «Մեր թաղը» ժողովածուները, Արազու «Պատմվածքները», Ե. Չարենցի «Երկիր Նաիրին»։ Ծրագրվում է հրատարակել Ռաֆֆու, Շիրվանզադեի, Մուրացանի և մյուս հայ գրողների ընտիր գործերը։

Ընդհանուր առմամբ Պետհրատը 1921 թ. հուլիսից մինչև 1926 թ. մարտը ծավալել էր մեծ աշխատանք, որը չափվում էր 356 անուն գրքով, 2461 և կես մամուլով։

Պետհրատը 1926 թ. արդեն կարող էր տալ տարեկան 2000 մամուլ գիրք, մոտ 400000 օրինակով, գրախանութների թիվը հասցրել էր 14-ի[14]։ Հատկապես հաջող էր կատարվել դասագրքերի և քաղաքական գրականությունից՝ Լենինի աշխատությունների հրատարակությունները։ Համեմատաբար թույլ էր մասսայական հանրամատչելի գիտական գրականության հրատարակությունը, որի պահանջները շատ մեծ էին թե՛ քաղաքում և թե՛ գյուղում։

1921 թ. օգոստոսի 20-ին հիմնվում է Հայաստանի Պետական թանգարանը, որի առաջին դիրեկտորն էր սովետական խոշոր կերպարվեստագետ Մ. Սարյանը։ Թանգարանի նպատակն էր հավաքել պատմա-կուլտուրական նշանակություն ունեցող իրերը և հիշատակները, դրանք ուսումնասիրել, պահել և ցուցադրել։

Թանգարանի կորիզը կազմեցին Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերության իրերը, բացի դրանից հետագայում նորաբաց թանգարանին են կցվում Նոր Նախիջևանի (Դոնի-Ռոստով) հայկական շրջանային թանգարանը և նախկին Լազարյան ճեմարանի թանգարանային արժեքները։ Լենինգրադի և Մոսկվայի թանգարանները նորաստեղծ Հայկական թանգարանին են նվիրում նկարներ և այլ թանկարժեք իրեր։

1924 թ. սկզբներին թանգարանն ավարտում է իր կազմակերպական շրջանը և բարեկարգ կուլտուրական օջախի տեսք ընդունում։ Թանգարանում հավաքված արժեքները հարուստ նյութ են տալիս հայ արվեստի, գրականության պատմության և ընդհանրապես կուլտուրայի ուսումնասիրության համար։

Թանգարանը բաղկացած էր ռևոլյուցիայի, գեղարվեստական, ազգագրական (տնայնագործական, զենքերի, դրամագիտական ենթաբաժիններով), հնագիտական, պատմագրական (ձեռագրերի և հին տպագրած գրքերի ենթաբաժիններով) և գրադարանային բաժիններից։ Նախատես-

---

12 «Զարյա Վոստոկա», 29 նոյեմբերի, 1923։

13 «Խորհրդային Հայաստան 1920—1925 թթ.», էջ 322։

14 Նույն տեղում։

վում էր թանգարանի գրադարանից առանձնացնել և կազմակերպել մամուլի հատուկ բաժին, որտեղ պետք է կենտրոնանային մինչ այդ լույս տեսած բոլոր հայ պարբերականները։

Թանգարանի ոևոլյուցիոն բաժնում գտնվում էին ոևոլյուցիոն շարժմանը, սոցիալիզմի թեորիային և պրակտիկային, բանվորա-գյուղացիական շարժմանը նվիրված գրքեր (ռուսերեն լեզվով՝ 700, հայերեն՝ 350), արխիվներ՝ 101, պարբերական հրատարակություններ՝ 222 հատոր, նկարներ, լուսանկարներ և այլ նյութեր՝ 500 թղթապանակ[15]։ Ազգագրական բաժինն ուներ 572 անուն զանազան իրեր (ձեռագործ, զգեստներ, մանեկեններ և այլն)։ Հնագիտական բաժնում կային Հայաստանում պեղված 860 անուն հնություններ, որոնք պատկանում էին քարե, բրոնզե և երկաթե դարերին։

Դրամագիտական բաժնում գտնվում էին Սասանյանների, Արշակունիների, կիլիկյան, Անիի, բյուզանդական, հռոմեական, արաբական, ռուսական, վրացական և այլ դրամների կոլեկցիաներ։ Զենքերի բաժնում պահվում էին Հայաստանի տերիտորիայում գործածված տաք և սառը զենքերի տեսակներ։ Պատմագրական բաժինը պարունակում էր 1793 անուն զանազան նամակներ, փաստաթղթեր, լուսանկարչական քարտեր, նկարներ, գրքեր, տետրեր և այլ նյութեր։

Գեղարվեստական բաժնում կային հայ, եվրոպական, ռուս նկարիչների և քանդակագործների տարբեր բնույթի 1183 գործեր։ Թանգարանի գրադարանը բաղկացած էր 3433 անուն գրքից[16]։

Տարեցտարի աճում էր թանգարանի հավաքածուների թիվը։ Եթե ստեղծման տարում այն 3062 էր, ապա 1925 թ. հասնում է 13973-ի։ Նույն թվականին թանգարանն ուներ 5 բաժին՝ հնագիտական, ազգագրական, պատմական-գրական, հեղափոխական, գեղարվեստական։ Թանգարանի բացման սկզբին այցելուների թիվը ամսական հասնում էր 15000-ի, իսկ 1925 թ.՝ 20000—25000-ի[17]։

* * *

ՌՍՖՍՌ Ժողկոմխորհը 1918 թ. հրատարակեց հատուկ դեկրետ, ըստ որի 16 տարին լրացած ամեն մի երիտասարդ ցանկացած համալսարան մտնելու իրավունք ուներ, և համալսարանը պարտավոր էր այդպիսիներին ընդունելու։ Սակայն շուտով պարզվեց, որ գործարանի և բուհի միջև պետք է հիմնել մի կրթավայր, որի բովով անցնելուց հետո բանվորը ոչ միայն իրավապես, այլև փաստորեն կդառնար ուսանող։ Այդպես ծնվեց համալսարաններին կից, մյուս ֆակուլտետներին հավասար իրավունքով օգտվող բանվորական ֆակուլտետ հիմնելու գաղափարը։

1919 թ. տարեբայնորեն ստեղծված բանֆակները օրինականություն ստացան։ Ուսումնական ծրագրով բանֆակները նույն միջնակարգ դպրոցներն էին, միայն 3 տարվա դասընթացներով, ուր լայնացված էր մաթեմատիկայի և բնագիտության առարկաների ծրագիրը։

Ժողովրդական տնտեսության վերականգնման առաջին տարիներին Ռուսաստանում, Բաքվում և Թիֆլիսում բանվորական ֆակուլտետները արդեն գոյություն ունեին և ընդգրկել էին բանվորության մեծ մասը։ Մոսկվայում արդեն 20000 բանվոր էր հաճախում բանֆակները[18]։ ՌՍՖՍՌ-ում 1922 թ. սեպտեմբերի 11-ին մեծ շուքով տոնվեց բանֆակների 3-րդ տարեդարձը։

Այս գործը Սովետական Հայաստանում սկսվում է ավելի ուշ՝ 1923 թ.։ Փետրվարին բացվում է Երևանի բանֆակը, իսկ սեպտեմբերին՝ Ալեքսանդրապոլինը։ Բանֆակ կարող էին ընդունվել այն բանվորները, որոնք վարժ գրում և կարդում էին հայերեն և գիտեին թվաբանական 4 գործողությունները։ Ընդունվելու համար յուրաքանչյուր բանվոր պարտավոր էր ներկայացնել արհմիության խորհրդի համապատասխան վկայական։ Կոմունիստները, բացի արհմիութենական վկայականներից, պետք է ունենային նաև գավառական կոմիտեներից տրված հանձնարարական՝ ՀԿՊ Կենտկոմի վավերացմամբ։

Բանֆակի վարչության մեջ մտնում էին համալսարանի ռեկտորը, երկու ներկայացուցիչ՝ արհմիություններից, մեկ ներկայացուցիչ՝ պարտիայի Կենտկոմից, մեկ՝ դասախոսներից և երկու՝ ուսանողությունից։ Բանֆակի առաջին դեկանն էր Հ. Ազատյանը, օգնականները՝ Թ. Ավդալբեգյանը և Հ. Գասպարյանը[19]։ Նրանք կազմում էին ֆակուլտետի փոքր խորհուրդը։

---

15 Հայկական ՍՍՌ Կենտրոնական պետական արխիվ, ֆ. 122, ց. 1, գ. 405, թ. 17։

16 Նույն տեղում։

17 «Խորհրդային Հայաստան 1920—1925», էջ 316։

18 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 1, գ. 283, թ. 28։

19 «Խորհրդային Հայաստան», 1924, № 1։

Երևանի Մելիք Մելիքյանի անվան բանֆակը ուներ հասարակագիտական և տեխնիկական թևքում, իսկ Լենինականի Հ. Հակոբյանի անվան բանֆակը՝ միայն տեխնիկական թևքում։ Երևանի բանֆակին կից կար նաև աղբրեջանական խմբակ։ Երևանի բանֆակում 1925—1926 ուսումնական տարում սովորում էր 370, իսկ Լենինականի բանֆակում՝ 365 հոգի[20]։ Բանֆակների առաջին շրջանավարտները ապացուցեցին, որ լրիվ ի վիճակի են կատարելու իրենց վրա դրված պարտականությունը և արժանի ավանդ մուծեցին տնտեսության վերականգնման, ինչպես նաև կուլտուրական շինարարության ասպարեզում։ Դա ցույց էր տալիս այդ զուտ բանվորական կուլտուր-կրթական օջախի կենսունակությունը։

Հայաստանի պետական կենտրոնական դիվանը (արխիվը) ստեղծվում է 1924 թ. մայիսի սկզբներին։ Նրա նպատակն էր ի մի հավաքել արխիվային բոլոր նյութերը, պահպանել ու կարգավորել դրանք որպես անցյալի ուսումնասիրության նյութեր։ Հայաստանի Կենտգործկոմի որոշմամբ ռեսպուբլիկայի բոլոր հիմնարկությունների արխիվները վերացվում են և նրանց մեջ եղած փաստաթղթերն ու գործերը կազմում են միասնական պետական արխիվի ֆոնդ, որը իր նյութերի բովանդակության համեմատ բաժանված էր հետևյալ մասերի՝ քաղաքական, տնտեսագիտական, իրավաբանական, պատմական-կուլտուրական և ռազմական։ Ժողկոմատները շարունակում էին ունենալ իրենց ընթացիկ արխիվները, որտեղ նյութերը պահվում էին 5 տարի։ Այդ ժամկետը լրանալուց հետո դրանք հանձնվում էին Պետական կենտրոնական արխիվին։

Հայաստանի տերիտորիայում եղած նախկին կառավարություններից մնացած արխիվները սոսկալի տուժել էին, մասամբ ոչնչացվել։ Բացի այդ, արխիվային թանկարժեք գործերի ու փաստաթղթերի մի մասը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տարվել էր Հյուսիսային Կովկաս։

Պետական կենտրոնական արխիվը սկսում է հավաքել հայ ժողովրդի պատմությանը վերաբերող բոլոր արխիվային նյութերը։

Սովետական Հայաստանի կառավարությունը դիմում է Միութենական կառավարությանը, խնդրելով, որ Մոսկվայի և Լենինգրադի կենտրոնական արխիվներում պահվող Հայաստանի պատմության վերաբերյալ նյութերն ուղարկվեն Սովետական Հայաստան[21]։ ՍՍՌՄ Կենտգործկոմի նախագահությունը բավարարում է այդ խնդրանքը։

Պետական կենտրոնական արխիվը գործունեության շրջանակները լայնացնելու և ֆոնդը հարստացնելու նպատակով սկսում է այնտեղ կենտրոնացնել նաև այն բոլոր արխիվային նյութերը, որոնք վերաբերում էին Հայաստանին, բայց գտնվում էին երկրի սահմաններից դուրս՝ թե՛ պետական, թե՛ հասարակական զանազան հիմնարկներում, և թե՛ մասնավոր անհատների մոտ։

Սովետահայ կուլտուրայի անդրանիկ օջախներից էր նաև Հայկական ՍՍՌ Գիտության և Արվեստի ինստիտուտը, որը բացվեց 1925 թ. ապրիլին և գործում էր Լուսժողկոմատի Ակադեմիական խորհրդի ղեկավարության ներքո։ Գիտական-գեղարվեստական այդ օջախը կոչված էր աջակցելու բնապատմական, մաթեմատիկական, տեխնիկական, պատմական, հասարակական և գիտա-աթեիստական խնդիրների դիտական ուսումնասիրությանը և նպաստելու ռեսպուբլիկայի տնտեսական ու կուլտուրական շինարարությանը։ Ինստիտուտն առաջին հերթին ուսումնասիրում էր Հայաստանի բնական և կուլտուրական միջավայրը, ինչպես նաև շինարարության հետ կապված տեխնիկական և գիտա-հետազոտական խնդիրները։ Նա լուծում էր գիտության, տեխնիկայի և արվեստի վերաբերյալ գիտական վեճերն ու տարաձայնությունները, կատարում էր հրատարակություններ, կազմակերպում դասախոսություններ, արշավախմբեր, ցուցահանդեսներ, սահմանում և բաշխում էր մրցանակներ, կապ էր պահպանում սովետական մյուս ռեսպուբլիկաների և արտասահմանի գիտական, գեղարվեստական հիմնարկությունների և ընկերությունների հետ։

Ինստիտուտն ուներ՝ 1. Ընդհանուր ժողով. 2. Խորհուրդ՝ իր նախագահով. 3. Բաժիններ իրենց քարտուղարություններով։

Ինստիտուտն ընտրում էր իսկական անդամներ, պատվավոր անդամներ և թղթակից անդամներ։ Իսկական և թղթակից անդամներն ընտրվում էին 3 տարով՝ վերընտրվելու իրավունքով։ Իսկական անդամների առաջին կազմը հաստատում էր Լուսժողկոմատը։ Պատվավոր անդամներ կարող էին ընտրվել գիտելիքների և արվեստագետների խորհրդի նախաձեռնությամբ։ Թղթակից անդամներ կարող էին ընտրվել համապատասխան բաժնի նախաձեռնությամբ՝ ռեսպուբլիկայից

---

20 «Խորհրդային Հայաստան 1920—1925 թթ.», էջ 303։

21 Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 3316, ց. 18, գ. 647, թ. 43։

դուրս ապրող այն գիտնականներն ու գեղարվեստագետները, որոնք իրենց գործունեությամբ, գրվածքներով և թղթակցությամբ կարող էին օգտակար լինել ինստիտուտի նպատակների իրագործմանը։ Ընտրություն կատարում էր իսկական անդամների ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ և ձայների պարզ մեծամասնությամբ։ Ընտրության արդյունքները հաստատում էր Լուսժողկոմատը։

Գիտության և արվեստի ինստիտուտի գերագույն մարմինը իսկական անդամների ընդհանուր ժողովն էր, որը հրավիրվում էր ամեն տարի ապրիլ և հոկտեմբեր ամիսներին։ Ընդհանուր ժողովը մշակում և վավերացնում էր ինստիտուտի և նրա բաժինների գործունեության ծրագրերը, կատարում էր ընտրություններ, քննում և ընդունում ինստիտուտի բաժինների բյուջեն։ Ինստիտուտի կենտրոնական գործադիր մարմինը 9—11 անդամներից բաղկացած խորհուրդն էր, որի անդամներից երեքը բաժինների գիտական քարտուղարներն էին, իսկ մնացածներն ընտրվում էին ընդհանուր ժողովի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ։

Ինստիտուտի նախագահությունը բաղկացած էր նախագահից, փոխնախագահից և բաժինների գիտական քարտուղարներից։ Նախագահը և փոխնախագահը ընտրվում էին խորհրդի կողմից՝ մեկ տարով։ Այդ ընտրությունը հաստատում էր Ակադեմիական խորհուրդը, որը պարտավոր էր առնվազն տարին երկու անգամ հրավիրել բաժինների միացյալ դոնրաց նիստեր։

Ինստիտուտն ուներ երեք բաժին՝ բնապատմական-մաթեմատիկական, պատմական-հասարակական և գեղարվեստական՝ իրենց ենթաբաժիններով։ Առնվազն ամիսը մեկ անգամ այդ բաժիններից յուրաքանչյուրն ունենում էր դոնփակ և բաց նիստեր, որտեղ տրվում էին տեղեկաններ գիտական ու գեղարվեստական հարցերի վերաբերյալ։ Ինստիտուտի յուրաքանչյուր իսկական անդամ տարեկան մի անգամ պարտավոր էր այդ նիստերին ներկայացնել իր ուսումնասիրությունը, ստեղծագործական աշխատանքը կամ զեկուցումը։

Հայկական ՍՍՌ Գիտության և արվեստի ինստիտուտի կանոնադրության համաձայն Լուսժողկոմատը 1925 թ. հունվարի 30-ին հաստատում է ինստիտուտի իսկական անդամների հետևյալ կազմը.

ա) Բնապատմական-մաթեմատիկական բաժնի դծով՝ Գրիգոր Արեշյան, Վահան Արծրունի, Հովակիմ Բեկելյան, Աբգար Իսահակյան, Ալեքսանդր Հակոբյան, Հակոբ Հովհաննիսյան, Ստեփան Ղամբարյան, Պապա Քալանթարյան, Համբարձում Քեչեկ, Լևոն Ռոտինյան։ բ) Պատմական-հասարակագիտական բաժնում՝ Մանուկ Արեղյան, Հայկ Ագատյան, Հրաչյա Աճառյան, Առաքել Բարխանյան (Լեո), Երվանդ Լալայան, Աշխարհեկ Լոռու-Քալանթար, Ցոլակ Խանզադյան, Ասատուր Խաչատրյան, Արտաշես Կարինյան, Սեմեոն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Ստեփան Լիսիցյան, Հայկ Դյուլիքևիչյան, Հակոբ Մանանդյան, Եղիշե Չարենց, Սենեքերիմ Տեր-Հակոբյան, Արսեն Տերտերյան և ուրիշներ։ գ) Գեղարվեստական բաժնի դծով՝ Նիկողայոս Բունիաթյան, Արշակ Բուրջալյան, Դերենիկ Դեմիրճյան, Ալեքսանդր Թամանյան, Թորոս Թորամանյան, Միքայել Մանվելյան, Ռոմանոս Մելիքյան, Մարտիրոս Սարյան, Ալեքսանդր Սպենդիարյան, Լևոն Քալանթար։

1925 թ. ամռանը ինստիտուտը կազմակերպում է երկու դասախոսություն նվիրված լեզվաբանության հարցերին։ Աշնանը տեղի է ունենում հանդիսավոր նիստ, որտեղ նշվում է Ֆ. Սունդուկյանի ծննդյան 100-ամյակը։ 1925 թ. հոկտեմբերի 18-ին Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի 200-ամյա հորելյանի առթիվ ինստիտուտում տեղի է ունենում հանդիսավոր նիստ։ Ինստիտուտում դասախոսություններ են կարդացվում հայ նկարիչների, ժողովրդական երաժշտության և հայկական պարերի, ինչպես նաև թատերական արվեստի զարգացման, ռուսահայ գրական լեզվի, Անիի ճարտարապետության և այլ հարցերի մասին։

Սովետական Հայաստանում 1920—1925 թթ. կուլտուրական շինարարության առաջնագծում կատարված առաջին քայլերը լայն հորիզոններ բացին աշխատավորների հոգևոր զարգացման համար։ Դա լենինյան ազգային բաղաքականության ճշմարտացիության վառ ապացույցն էր։ Կոմունիստական պարտիայի կողմից ժողովրդական լայն մասսաների կուլտուրական վերելքը կազմակերպելու աշխատանքը վերականգնման ժամանակաշրջանում անհրաժեշտ նախապայմաններ ստեղծեց սոցիալիստական շինարարության տարիներին ծավալված կուլտուրական ռևոլյուցիայի համար։

ПЕРВЫЕ ОЧАГИ СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ

В. О. КАЗАНДЖЯН

(Резюме)

Установление советской власти в Армении коренным образом изменило политические, экономические и культурные условия жизни армянского народа.

Коммунистическая партия, начав работу по восстановлению народного хозяйства разоренной страны, наметила также обширную программу культурного строительства, к осуществлению которой она приступила с огромной энергией.

Победа советской власти в Армении и первые мероприятия партии и правительства по становлению новой армянской культуры нашли горячий отклик среди передовых представителей армянской интеллигенции, которые стали съезжаться в Ереван не только со всех концов нашей Родины, но и из зарубежных стран.

Вхождение Армянской ССР в Закавказскую федерацию, а затем в Союз Советских Социалистических Республик, создало огромную возможность теснее связать армянскую культуру с культурой братских народов нашей многонациональной Родины.

Как во всех звеньях социалистического строительства, так и в деле создания, упрочения и дальнейшего развития новой культуры неоценимую помощь оказывал накопленный опыт культурного строительства в РСФСР.

Среди многочисленных и больших задач, стоявших перед Коммунистической партией Армении на культурном фронте, была неотложная задача создания первых очагов советской армянской культуры.

В 1920—1925 гг. были основаны Ереванский государственный университет, Государственная консерватория, Госиздат, Государственный музей Армении, рабфаки, Институт науки и искусства Армянской ССР, Государственный драматический театр, музыкальная студия, публичная библиотека, «Матенадаран», «Ассоциация пролетарских писателей Армении», «Госфотокино», «Товарищество армянских художников» и другие очаги советской армянской культуры и науки.

Несмотря на большие трудности, первоначальные успехи в области культтуры создали необходимый фундамент для бурного ее развития на последующих этапах культурного строительства.